

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ԴՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.09.2023



Միրելի՛ աշակերտներ և ուսանողներ, մանկավարժներ ու ծնողներ

Շնորհավորում եմ բոլորիդ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ:

Գիտելիքի և դպրության օրն առանձնահատուկ և կարևոր տոն է, որին հայ ընտանիքները պատրաստվում են յուրահատուկ ջերմությամբ:

Նոր ուսումնական տարին, սիրելի ուսուցիչներին և դպրոցական ընկերներին հանդիպելու սպասումների հետ մեկտեղ, նաև նոր հնարավորություններ է բերում անձնական աճի ու նվաճումների, կրթական հաջողությունների, մասնագիտական հմտությունների զարգացման համար:

Մեր մարզի ապագա ձեռքբերումների բանալին նույնպես ձեր կրթական հաստատություններում է՝ նախակրթարաններից մինչև դպրոցներ, քոլեջներ ու համալսարաններ: Ուստի, թե՛ սովորողները, թե՛ դասավանդողները պետք է հնարավորինս կատարելագործեն առկա հզոր ներուժը՝ համատեղելով մանկավարժական լավագույն ավանդույթները նորարարական գաղափարների մշտական որոնումների հետ:

Առանձնակի շնորհավորանքս՝ առաջին անգամ ՆՈՒՀ-եր, դպրոցներ, քոլեջներ ու բուհեր ուղղողներին. բոլորդ անհամբերությամբ եք սպասել այս սեպտեմբերին, ու թո՛ղ, որ իրականություն դառնան այսօրվա հետ կապված բոլոր ակնկալիքները: Իսկ մեր՝ մեծերիս պարտքն է օգնել ձեզ սիրել ուսումը և ամեն ինչ անել կրթության ու ինքնազարգացման համար բարենպաստ միջավայր ապահովելու համար: Կրթությունը մի՛շտ մեր առաջնահերթություններից է՝ նույնիսկ ամենադժվարին ժամանակներում:

Բոլորիդ մեծ հաջողություններ ու խաղաղություն եմ մաղթում այսօրվանից սկսվող կրթաշրջանում:

Քարի՛ մեկնարկ 2023-2024 ուսումնական տարուն: